

85

1910

№ 78 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՂԻՐԻՐ-ՏԱՐԱԶԻ № 78

—ՄԻԱԼՄՈՒՆԲ—



ՄԱՆԿԱՆՈՅՈՒՄ

Ազգեր-Տարազի 1910 թ. XIV-րդ պեմբա

891. 71

Մ-45



Տպարան ԲՅԿ. «Կոմիտաս» Վեհամիս. № 18.



ՍԽԱԼՄՈՒՆՔ

Կոմեդիա 2 գործողութեամբ

Հեղինակութիւն Մ. Մեծակովի.

Թարգմ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՕՐԴՈՒԹԵԱՅ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆԲ

ՄԱՐԻԱՄ. 11 տարեկան:

ԱՐԱՄ. 10 տարեկան, նրա եղբայրը:

ԱՇԽԷՆ. 11 տարեկան, Մարիամի ընկերուհին:

ՏԻԿԻՆ ՄԵԼԻՔԵԱՆ. պառաւ կին:

ԳԱՐԵԳԻՆ. 9 տարեկան, սրա թուր:



5199-55

1 ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Քեմը ներկայացնում է սովորական սենեակ, հարուստ ընտանիքում: Երկու դուռ: Սեղանի վրայ գրքեր ու տետրակներ:

Մարիամ

(Մենակ, պարապում է սեղանի մօտ. հագին դարձրական համազգեստ. կարդում է).

«Վաճառականը ծախեց երկու կտոր թաւիչ 189 բուբուռ. առաջին կտորի իւրաքանչիւր արշինը մի բուբուռով աւելի թանգ արժէր, քան երկրորդինը: Քանի՞ արժէր իւրաքանչիւր կտորը, եթէ առաջինում կար 18 արշին, իսկ երկրորդում 20 արշին»:

(Մտածում է. յետոյ խօսում).

Դէ, արի ու վճռիր: Ախ, անիծանծ թւարանութիւն: Եւ ինչիս է պէտք նա: Ո՞ւմ թաւիչով առնուր անելու չեմ ես... իսկ թաւիչ հագնելը—այդ ուրիշ գործ... Ինչպէս ուրախ կըլինեմ, երբ կը հանեմ այս ատելի համազգեստը ու կունենամ ամեն տեսակ հագուստներ, և՛ մետաքսեայ, և՛ թաւեայ... Ահա հօրեղբորս աղջիկը, Եղիսարէթը, անցեալ օրեր հագել էր նոր թաւեայ վերարկու. ինչպէս գեղեցիկ է, փափուկ ու տաք... բաղդաւոր է Եղիսարէթը:

(Վեր է կենում և բեմի վրայ ման գալով):

Եւ ինչե՞ր ասես, որ նա չունենայ. շորեր, գլխարկներ, մետաքսեայ գուլպաներ: Հապա մատանիները... քանի՞-քանի ապարանջաններ: Մայրիկս ասում է, որ ես էլ կունենամ այդ բոլորը, երբ գիմաղիօնը աւարտեմ, բայց անպայման պարգևով: Իսկ երբ կաւարտեմ ես այդ ձանձրալի գիմաղիօնը: Դեռ ամբողջ վեց տարիներ պէտք է մաշեմ նրա սանդուխքները:

(Մանր նստում է սեղանի մօտ):

Բայց և այնպէս պէտք է դասերս պատրաստել. տեսներ, որքան արժէ իմ վերարկւին համար թաւիչի արշինը:

(Գրում է, ջնջում է գրածն ու յանկարծ ցատկում):

Ո՛չ, չեմ կարող: Բոլորովին չեմ կարող վճռել: Անշուշտ, գրքի մէջ սխալ կայ: Չը խնդրեմ արդեօք Արամին: Նա մի բոլորում կը վրձնի, շատ ընդունակ է թւարանութեան մէջ: Բայց ամա՛ թէ կը ջիգրացնէ ինձ. կասէ, որ ես ծոյլ եմ, չեմ ուզում «ուղեղս յոգնեցնել»: Այդ մեր Միքայէլ հօրեղբոր խօսքերն են, որ նա սովորել ու շարունակ կրկնում է: Եւ հօրեղբայրս էլ սիրում է նրան ու երես է տալիս: Մի քանի օր առաջ ժամացոյց ընծալեց, դէ, ինչ երեխայի բան է ժամացոյցը. անպատճառ կը փչացնէ:

(Հաւաքում է գրքերը):

Ինչ արած, գնամ, ուրիշ ճար չըկայ:

Ա. Ե. Ե.

(Մտնում է)

Բարե, Մարիամ: Այդ ի՞նչ է, դու տօն օրերին էլ դասերով ես զբաղւում:

Մարիամ

(Համբուրում է Աշխէնին):

Ախ, Աշխէն, ինչպէս ուրախ եմ քեզ տեսնելու: Երեակալի, երէկ դասերս չըկարողացայ վերջացնել, իսկ այժմ ամբողջ մի ժամ այս խնդրի վրայ չարշարւում եմ:

Ա. Ե. Ե.

(Նայելով գրքին):

Սրա վրայ. ախր սա ամենապարզ խնդիրն է: Տես:

(Նստում է սեղանի մօտ, գրում է և ասում):

Պէտք է գումարից հանել 18, կը մնայ 171: Այժմ պէտք է իմանալ՝ քանի արշին թաւիշ կար երկու կտորի մէջ. 18 և 20 գումարել, կըստացել 38. բաժանենք 171 բուրլին 38-ի վրայ, կը ստատանանք 4 ր. 50 կոպ., ուրեմն երկրորդ կտորի արշինը արժէ 4 ր. 50 կոպ. իսկ առաջին կտորի արշինը 5 ր. 50 կոպ. Այժմ բազմապատկենք 4 ր. 50 կոպ. 20-ի վրայ, կը լինի 90 բուրլի. իսկ 5 ր. 50 կոպ. 18-ի վրայ կը լինի 90 բուրլի. Ահա և պատաստ է. Հաւաքել շուտով զբերող և գնանք խաղանքի: Մայրիկն արձակեց ինձ քեզ մօտ ամբողջ օրով:

Մարիամ

Ինչպէս ուրախ եմ. Շնորհակալ եմ, որ դու վճռեցիր իմ խնդիրը, այժմ ես ազատ եմ, հաւատակ դէպքում ստիպւած էի Արամին խնդրել, որ ինձ օգնէ:

Աւելի

Արամին. քո եղբորը. 2⁵ որ նա դեռ ևս առաջին դասարանում է և քեզանից էլ մի տարով փոքր:

Մարիամ

Ի հարկէ, բայց նա շատ ընդունակ է, միշտ հինգեր է ստանում և դեռ անցեալներում նրա ուսուցիչն ասում էր, որ նա կարող էր սովորել երկրորդ դասարանում:

Աւելի

Բայց և այնպէս ամօթ է քեզ խնդրել նրան, որ վճռէ քո խնդիրները: Ինչ ծիծաղելի բան կը լինէր, եթէ ևս գնայի եղբորս Արտաշէսի մօտ դաս սովորելու:

(Ծիծաղում է):

Իսկոյն գուրս կանէր ինձ սե-

նակից և դեռ մօրս էլ կերթար գանգառելու, որ ես խանգարում եմ նրան: Նա մեր մէջ մեծ է և խելացի. հինգերորդ դասարանը փոխադրեց, մեզ հետ երբէք չի խաղալ: Իսկ Արամը լաւ տղայ է, բարի և շատ էլ ուրախ:

Մարիամ

Դէ, շատ մի գովիլ... սիրում է Հարացնել: Շատ երես առաւ. ամենքը նրան գովում են, ընծաներ են բաշխում:

Աւելի

Իսկ քեզ միթէ չ'են բաշխում:

Մարիամ

Ի հարկէ, բաշխում են, բայց հասարակ բաներ. Այ մեր հօրեկրայր Միքայէլը Արամին մի լաւ ժամացոյց ընծայեց, իսկ ինձ մի քսակ տես:

(Հանում է գրպանից):

Աւելի

Ինչ գեղեցիկ քսակ է. ոսկի էլ կայ մէջը, ինչո՞ւ ես ման ածում գրպանումդ, Մարիամ, կարող ես կորցնել. Դիւր քսակ սեղանի արկղի մէջ և գնանք շուտով խաղալու:

(Դնում է քսակը արկղի մէջ):

Դարեգին

(Աղբատ հագնած, ձեռքում տետրակներ և գրքեր, վախճնալով մտնում ու գլուխ է տալիս):

Բարե ձեզ, օրիորդ. Արամը տանն է:

Մարիամ

(Ակամայ):

Ես ի՞նչ գիտեմ:

Դարեգին

Նա ինձ պատւիրեց գալ այստեղ:

Մարիամ

(Դժգոհութեամբ)
Հարցրու խոհանոցում և գլուխս մի ցաւացնիլ:
(Դարեգինը հեռանում է):

Աւելի

Օյ, ի՞նչ բարեկացկոտն ես եղի, հա՛: Ախր այդ լաւ չէ. վերադրեցիր խեղճ տղային: Ո՞վ է նա:

Մարիամ

Տղայի մէկն է... Արամի բարեկամը... Նրա պատու կաղ տաւ մեր բակումն է ապրում, Արամի հետ գերի են խաղում:

Աւելի

(Ծիծաղում է):

Ինչպէ՛ս. կաղ պատու գերի է խաղում:

Մարիամ

Չէ, Դարեգինն է խաղում. Դէ գնանք իմ սենեակը:

(Գնում են երբ գրեհած):

Արամ

(Դպրոցական համադրեալով, Դարեգինի հետ մտնում է մեւ դռնից):

Ի՞նչ, սովորեցի՞ր դասդ. մի երես էլ արտագրեցի՞ր:

(Վերցնում և նայում է տետրակը):

Շատ լաւ, ապրիւս: Դէ արի կարդանք, նստիր:

(Նստում է սեղանի մօտ, Դարեգինը կանգնած է):

Ինչո՞ւ այսօր այդպէս տխուր ես: Դէ ասա, ի՞նչ պատահեց:

Դարեգին

(Աւելի):

Տատիս խղճում եմ:

Արամ

Ի՞նչ եղաւ տատիդ, հիւանդ է արդեօք:

Դարեգին

Ոչ, հիւանդ չէ: Մուշտակ չունի խեղճը: Մի լաւ, տաք մուշտակ ունէր նա, բայց զարնանը զբաւ դրեց, իսկ այժմ փող չունենք, որ յետ առնենք: Շուտով ցրտեքը կը սկսեն, ինչո՞վ տառաւ փողոց դուրս կը գայ. խըղճում եմ տատիս:

(Թեւով աչքերը սրբում է):

Արամ

Մի լար, Դարեգին. ես ամեն կը կարգի կը բերեմ: Հօրս կը խնդրեմ, նա կ'օգնէ:

Դարեգին

Ոչ, պէտք չէ, մի ասէ՛ք: Աղան կը բարկանայ. մենք առանց այն էլ բնակարանի համար պարտական ենք, դեռ կը հրամայէ, որ ինձ վճարեն:

Արամ

Հապա ի՞նչ անենք. Արդեօք շատ փող է պէտք տատիդ:

Դարեգին

Շատ. վեց բուրլի:

Արամ

Այո, բաւական շատ է: Եւ օրտեղից դանկը այդքան փող. Ահա թէ ինչ, Դարեգին. գնա այժմ տուն, իսկ երեկոյեան կըրկին արի, ես մի որ և է բան կանեմ. Մի վախենաւ. ասացի, որ կ'օգնեմ, ուրեմն կ'անեմ:

(Դարեգինը գնում է. Արամը մենակ):

Ո՞րտեղից գտնեմ վեց բուրլի: Մայրիկից խնդրել չեմ համարձակւի: Իմ բուրլիս ես կը տամ, իսկ մնացածը ձրտեղից վերցնեմ: Մարիամից, Հէնց նոր հօրեկրայրս նրան փող ընծայեց. Բայց ախր երբէք չի տալ, եթէ իմանայ, որ Դարեգինի տատի համար է: Պէտք կը լինի մի կերպ նրանից առնել... Բայց անա և նա:

Աւելի

(Մտնում է, նրա հետեւից Մարիամը):

Բարե ձեզ, Արամ. մենք եկանք ձեզ հետ լոտօ խաղալու. երկուսով ձանձրալի է:

Արամ

Շատ լաւ, եկէ՛ք խաղանք:

(Մտնում է Մարիամին):

Մարիամ, փոխ տուր ինձ, սիրելիս, քո փողերդ, ինձ շատ հար-

կաւոր է, ես շուտով քեզ կը վերադարձնեմ:

Մարիամ

Քեզ, իմ հինգ բուրլիս: Երբէք, և ոչ մի դէպքում: Եւ ինչի՞ք է պէտք քեզ փողը: Արդեօք դարձեալ ի՞նչ յիմարութիւններ մտածեցիր:

Արամ

Ես ուզում եմ շղթայ գնել ժամացոյցիս... այսօր ժամագործի խանութի պատուհանում տեսայ, իսկ իմ փողս բաւական չէ...

Մարիամ

Դատարկ բան է. առանց շղթայի էլ լաւ է:

Աւօխէն

Ինչո՞ւ ես ժլատութիւն անում: Քեզ այս րոպէիս այդ փողը հարկաւոր չէ, տուր նրան:

Մարիամ

Որպէսզի նա իր Գարեգինի հետ այդ փողերով անուշեղէն առնէ, ի՞նչպէս չէ, իսկոյն: Հանգիստ թողէք ինձ. իսկ եթէ գլուխս շատ էլ տանես,

(դառնալով Արամին),

մայրիկիս կասեմ և կը խնդրեմ, որ այդ անպիտան տղին ներս էլ չընդունեն:

Արամ

Թի՛ւէ, ի՞նչ չարահոգի ես:

Մարիամ

Բայց և այնպէս փող չեմ տալ:

Աւօխէն

Լաւ, մի տալ, քեզ ոչոք չի ստիպում: Բաւական է վիճել: Մենք ուզում ենք լոտո խաղալ, ուրեմն սկսենք: Արամը կերթայ լոտոն բերելու, իսկ դու խնդրիր

օրիորդից կաղիններ, որ խաղալու մի բան լինի: Մինչ այդ՝ ես սեղանի վրայից ամեն բան կը հաւաքեմ:

(Արամն ու Մարիամը գնում են: Աւօխէնը մենակ, նայում է նրանց ետեւից):

Ինչպէս ժլատ է Մարիամը, վատ չէր լինի նրան խրատել... Չ'առնեմ արդեօք նրա փողերն ու պահեմ... երեւակայում եմ ինչպէս կը բարկանայ:

(Վերցնում է քսակն ու դնում գրպանը):

Թող փնտռէ. վաղւայ երեկոյից առաջ չեմ վերադարձնի:

(Հաւաքում է սեղանի վրայի իրերը, Արամը մտնում է լոտոյով):

Արամ

Ահա և լոտոն:

Աւօխէն

Տէ՛քք ինձ:

(Հանում է արկղի միջից թղթերն ու դարսում է սեղանի վրայ):

Արամ, ասացէք, խնդրեմ, ինչ-ներե՞ր է պէտք այդ փողը:

Արամ

Արամ, ես ասացի նոր ժամացոյցիս շղթայի համար:

Աւօխէն

Հաւատալս չի գալիս:

Մարիամ

(Մտնում է կաղինների փնտռով):

Ի՞նչ էք այստեղ փնտռում:

Աւօխէն

Ձեռք էլ մտածում: Ահա քո տեղը: Ես սկսում եմ:

(Ասում է թւերը: Արամն ու Մարիամը նշանակում են ասած թւերը: Խաղի ժամանակ վարագոյրը իջնում է):

II ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Միեւնոյն սենեակը)

Արամ

(Շտապով մտնում է, գլխարկը սեղանի վրայ դնում և նստում):

Ի՞նչպէս յոգնեցայ: Կարծես շրնեքը ետեւիցս էին ընկած, այնպէս էի վազում: Բայց և այնպէս ամեն բան սարքեցի. ճաշից յետոյ հայրս ու մայրս հիւր գընացին. ես կամացուկ հագնեցայ, անցայ խոհանոց, այդ տեղիցն էլ փողոց... Օրիորդը պատուհանից տեսաւ, կանչեց «Բեր», իսկ ես իբրեւ թէ չեմ լսում, շարունակում եմ ճանապարհս... հասայ խանութ, ցոյց տւի ժամացոյցս, հարցնում եմ՝ կառնե՞ն արդեօք, իսկ գործակատարը շատ խիստ նայեց ինձ վրայ և ասաց. «Ի՞նչ պատճառով էք ժամացոյց ծախում, երիտասարդ պարոն»: Ես նոյն իսկ վախեցայ, ուզեցի վազել, բայց նա շուտով ծիծաղեց և առաջարկեց ինձ հինգ բուրլի: Դէ ես էլ վազեցի տուն. իսկ այստեղ բախում Գարեգինն արդէն սպասում էր ինձ. տւի նրան փողերս, ամեն ինչ պատմեցի և ապա վազեցի այստեղ... կարծում եմ, որ նրա տատը կուրախանայ: Միայն թէ ոչոք չիմանար, մանաւանդ Մարիամը. ամենքին կը պատմէ. այնպէս բաց չեբան է

(Ականջ է դնում):

Կարծես, այստեղ են գալիս... շուտով գտերս սկսեմ:

(Վերցնում է գիրքը):

Մարիամ

(Մտնում է փակելի ձեռքին և նստում):

Տեսէք, ինչ խորամանկն է, գիրք է կարդում, կարծես, ոչինչ եղած չէ: Թոյլ տէ՛ք ձեզ հարցնելու, Բրտեղ էիք վազում այս րոպէիս:

Արամ

Քեզ ի՞նչ:

Մարիամ

Այն, որ օրիորդը ստատիկ բարկացաւ և ուզում է քեզ վրայ մօրս գանդատել: Նա տեսաւ, թէ ինչպէս դու փախար, կանչեց քեզ և պատուհանը թրխկացրեց, իսկ դու իբրեւ թէ խուլ ես, յետ էլ չը նայեցիր: Շատ լաւ գիտես, որ մայրիկս մեզ թոյլ չի տալիս առանց հարցնելու տնից հեռանալ: Սպասիր, քո բոլոր յիմար չարութիւնները համար լաւ պատիժ կը ստանաս:

Արամ

Ոչ մի պատիժ էլ չի լինի, և քո օրիորդից էլ ես ամենեւին չեմ վախենում: Նա գործ չունի ինձ հետ: Աւելի լաւ է թող ձեզ՝ աղջիկները վրայ հսկէ, իսկ ինձ հանգիստ թողնէ:

Մարիամ

Այլ կերպ կը խօսես, երբ կը պատժւես: Ես լսեցի, ինչպէս մայրիկս անցեալ օր ասեց, որ եթէ դու չարութիւն անես և չը լսես, նա կը խլէ քեզից այն ժամացոյցը, որ հօրեղբայրս քեզ նւիրեց:

Արամ

(Տեղից ցատկելով):

Այդ սուտ է:

Մարիամ

Ձէ, ճիշտ է:

Արամ

Ոչ, սուտ է:

Մարիամ

Ճիշտ է, ճիշտ է:

(Հաղելով հեռանում է):

Արամ

(Մենակ. կանգնում է բեմի մէջ տեղը):
Այ թէ բան: Ի՞նչ անեմ, եթէ
նրա ասածը ճշմարիտ է: Օրիորդ
դը կըզանգատուի մօրս, մայրս
կըպատժի, կըպատուիրէ ժամա-
ցոյցը բերել, իսկ ժամացոյցը
չըկայ: Ի՞նչ պատասխանեմ ես:
Այդ դէպքում այլևս խաբել չի
լինի, ինչպէս էլ լինի կիմանան:
(Մտածում է): Գնամ, խնդրեմ օրի-
որդին, որ չըզանգատուի. կասեմ,
որ տետրակիս վրայ թանաք
թափեց, ուստի և վազեցի նոր
տետրակ գնելու. կարելի է, կը-
հաւատայ: Միայն թէ Մարիամն
այնտեղ չըլինէր. նրա ներկայու-
թեամբ չեմ էլ խնդրի, որովհետեւ
կըսկսի ինձ չգրացնել, այնպէս
չարասիրտ աղջիկ է. պէտք է
որեւէ գործով նրան այստեղ ու-
ղարկել: (Ծանր քայլերով գնում է):

Պարեգիկ

(Մի րոպէից յետոյ մտնում է միւս
դռնից. ամաչելով չորս կողմն է նայում)
Արամ, Արամ, մօր էք. երեւի,
այստեղ չէ նա, իսկ ես ինքս տե-
սայ ինչպէս նա տուն մտաւ. ա-
հա և նրա գգակը:
(Մի քիչ բարձր):
Արամ: Ոչ, չի լսում, իսկ միւս
սենեակները գնալ վախենում եմ.
դարձեալ ինձ կըյանդիմանեն:
Ի՞նչպէս անեմ: Տատիկս պատուի-
րեց անպատճառ փողերը յետ
տամ Արամին, իսկ ձրտեղ գտնեմ
ես նրան:

Մարիամ

(Մտնում է):
Արամն ասաց, որ ինձ կանչում
են այստեղ. արդեօք Աշխէնը չէ՞
կանչողը:
(Տեսնելով Գարեգինին):
Այ, կրկին այս մուրացկանը:

Պարեգիկ

(Գլուխ տալով):
Բարեւ ձեզ, օրիորդ:

Մարիամ

(Արհամարհանքով):
Բարեւ, ինչո՞ւ ես կրկին այս-
տեղ քաշ գալիս:
(Գարեգինը լուռ է):
Դէ պատասխանիր, երբ հարց-
նում են:

Պարեգիկ

Ինձ շատ հարկաւոր է Արամին
տեսնել... միայն մի րոպէով...
պէտք է նրան յայտնել...

Մարիամ

Արամին տեսնել քեզ անկարե-
ւի է: Այս րոպէիս նրան պատ-
ժեցին և նա քեզ հետ այսուհետեւ
երբէք խաղալու չէ: Իսկ դու շու-
տով հեռացիր այստեղից... Մա-
քո տեղը չէ: Գնա փողոց, որտեղ
քեզ պէս տկուրներ շատ կան, և
նրանց հետ խաղ արա:

(Ուզում է հեռանալ):

Պարեգիկ

Աշխատում է բռնել նրա ձեռքը):
Սիրելի օրիորդ, մի հեռանա՞ք:
Լսեցէք, ես ձեզ ամեն ինչ կը-
պատմեմ, խնդրում եմ...

Մարիամ

Կորիւր, կեղտոտ: Չըհամարձակ-
ւես դիպչել ինձ քո կեղտոտ թա-
թերով:

[Հըռում է նրան և գնում]:

Պարեգիկ

(Մենակ):
Ի՞նչ պատահեց: Արամին պատ-
ժեցին, ինձ չեն թողնում նրա
մօտ: Անշուշտ իմացան, որ նա
ծախեց ժամացոյցը: Խեղճ Արամ,
երեւի լալիս է հիմա. և այդ բոլորը
մեր պատճառով: Վազեմ, շուտով
տատիս կանչեմ, նա ամեն բան
կը պատմի և նրան կը ներեն.
Թող ինձ տանից դուրս անեն,
միայն թէ նրան փորձանքից ա-
զատեմ:

(Գնում է):

Արամ

(Ծանր մտնում է):
Խնդրեցի, շատ խնդրեցի օրի-
որդին, մինչև իսկ համբուրել ու-
ղեցի նրան, չի լինում. լսել իսկ
չի ուզում: Բոլորը, ասում է, կը
պատմեմ մայրիկիդ: Ես Մարիա-
մին էլ այստեղ ուղարկեցի, կար-
ծելով թէ կը համոզեմ օրիորդին:
Չէ, նա դարձեալ իրանն է ասում:
Շատ բարկացկոտ է. ամեն բան
յիշեցրեց. և այն, որ ես իրա հա-
ղուստը անդգուշութեամբ պատ-
ռեցի, և այն, որ Մարիամի կատ-
ւիկի դունչը ներկեցի: Այնպէս
էլ դուրս եկայ, իսկ Մարիամը
ման է գալիս և վրաս ծիծաղում:
Ի հարկ է, ուրախ է, որ ինձ պի-
տի նախատեսն: Սպասիր, կը գաս
դարձեալ ինձ մօտ, որ խնդիրդ
վճռեմ, չեմ վճռիլ, թող ուսու-
ցիչը քեզ երկու նշանակէ: Գոնէ
հայրս ու մայրս շուտով վերա-
դառնային, ամեն ինչ իմանային,
պատժէին ինձ ու վերջանար:
Ապա թէ ոչ նստիր ու սպասիր:
Խաղալ էլ չեմ ուզում, դասերս
էլ չեմ կարողանում սովորել:
Գնամ սեղանատուն, նստեմ պա-
տուհանի մօտ, այնտեղից կերե-
ւայ, երբ կը գան:
(Գնում է: դռան մօտ Մարիամի հետ
ընդհարում է: Մարիամը մտնում է):

Մարիամ

(Մենակ. Արամի ետևից):
Տէր Աստուած, ինչպէ՞ս փրկել է:
Բայց լաւ էլ կը պատժւի: Տեղն
է նրան. փողոցային երեխաների
հետ թող այնքան քաշ չը գայ:
(Նստում է):
Ինչո՞ւ Աշխէնը չի գալիս: Ու-
զում էր գալ, հէնց որ դասերը
կը պատրաստէր: Իմ մեծ տիկնի-
կիներին համար երկար շոր պի-
տի կարէր. ես մետաքս է կտոր-
տանք ունեմ, իսկ նա ուզում էր
շղարշ բերել: Ահա և նա:
(Վազում է դռան մօտ):

Տիկ. Մեղիբեան

(Մտնում է փաթախած, ձեռնափայ-
տով, նրա ետևից Գարեգինը):

Բարեւ ձեզ, իմ գեղեցկուհի. չը
գիտէ՞ք արդեօք, ուր է ձեր եղ-
բայր Արամը:

Մարիամ

Չը գիտեմ. ի՞նչ գործ ունէ՞ք նրա
հետ:

Տիկ. Մեղիբեան

Ես եկայ, նախ և առաջ շնոր-
հակալութիւն յայտնելու նրան,
իմ թանգագին Արամիկին, և ապա
ուզում եմ վերադարձնել նրա
փողը. այժմ այդ փողը ինձ հար-
կաւոր չէ:

Մարիամ

Ի՞նչ փող: Ո՞րտեղից նա ձեռք
բերեց փող:

Տիկ. Մեղիբեան

Իր սեպհական փողը, սիրելիս.
նա ինձ ուղարկեց վեց ռուբլի,
ինձ, պառաւիս, նեղութիւնից
ուզեց ազատել, բայց այսօր աղ-
ջիկս ինձ տաս ռուբլի իր վաս-
տակից բերեց: Հէնց այդ ժամա-
նակ Գարեգինս վաղեց. ասելով,
թէ Արամին պատժեցին, ես էլ
մտածեցի, թէ արդեօք փողի հա-
մար չէ՞: Եկայ հարցնելու, ահա
և փողն էլ բերի:

Մարիամ

Վեց ռուբլի: Ո՞րտեղից նրա
մօտ կը լինէր այդքան փող:
Արդեօք նա իմ փողերը չի՞ վերց-
րել: Նայեմ:

(Բանում արկղը):

Այդպէս էլ է: Կորել են: Այ, նա
գող է:

(Վրդոված ման է գալիս):

Անպիտան աղայ՝ ես քեզ ցոյց
կըտամ: Իմ փողերս գողացաւ:
Մայրիկիս կասեմ, հայրիկիս,
ամենքին:

(Վազում է դռան մօտ, որտեղից դուրս
են գալիս Աշխէնն ու Արամը):

Ա.րամ

Մարիամ, ռւր ես գնում:

Ա.սխէն

(Բռնելով Մարիամին):

Կանգնիր, ի՞նչ պատահեց:

Մարիամ

Իմ փողերս կորան: Նա գողացաւ փողերս, անպիտան գող:

Ա.սխէն

Դէ ի՞նչ ես բղաւում: Ոչոք քո փողերդ չի գողացել. ես մտածեցի քո ժլատութիւնդ պատժել և երէկ տարայ քո փողը: Ահա քո փողը լրիւ. առ, նայիր:

(Տալիս է Մարիամին բաւեր):

Տիկ. Մելիքեան

Ոչինչ չեմ հասկանում:

(Արամին):

Ասացէք, սիրելիս, ձրտեղից էք վերցրել դուք այն փողը, որ ինձ, պառաւիս, ուղարկեցիք Գարեգինին ձեռքով: Ահա ձեր քոյրը կարծում էր, որ դուք այդ փողը իրանից էք վերցրել:

Գարեգին

(Առջ գալով):

Ես կասեմ, ես գիտեմ: Նա պատուիրեց չասել, բայց ես կասեմ: Նա փող չի գողացել, այլ ծախեց այն ժամացոյցը, որ հօրեղբայրն իրան ընծայել էր. գաղտնի կերպով ծախեց, որովհետեւ վախեցում էր, որ կիմանան և կըպատուիրեն ինձ քեզ հետ տանից դուրս անել:

Մարիամ

Ահա թէ դու ուր էիր վազում, երբ օրիորդը չըկարողացաւ քեզ յետ կանգնեցնել:

Ա.սխէն

Իսկ դու նրան գող անւանեցիր. նա լաւ, բարի տղայ է, աղքատ-

ների համար իր ժամացոյցն իսկ չըխնայեց, իսկ դու նոյն իսկ հինգ ռուբլի չուղեցիր տալ նրան, ժլատ:

(Մարիամը ծածկում է երեսը ձեռքերով):

Ինչու ծածկեցիր երեսդ: Ամաչեցի՞ր: Մայրեկդ քեզ չի գովիլ, երբ ամեն բան խմանայ: Աւելի լաւ է՝ գնա, ներողութիւն խնդրիր Արամից:

Ա.րամ

(Գրկելով Մարիամին):

Մի լար, Մարիամ, ես չեմ բարկանում. չէ՞ որ ես էլ շատ անգամ քեզ բարկացնում եմ: Արի պատմենք մայրիկին ճշմարտութիւնը և նրանից թոյլտուութիւն խնդրենք միասին Գարեգինին չթեղէն շապկցու առնելու: Նա միայն երկու շապիկ ունի:

Մարիամ

Լաւ, լաւ. ես ինքս կըկարեմ շապիկը. չէ՞ որ ես կարել գիտեմ:

Ա.սխէն

Ես էլ կօգնեմ. դա աւելի հետաքրքիր է, քան թէ կարել տիկնիկի համար:

Տիկ. Մելիքեան

Ախ, դուք իմ սիրունիկներս, դուք բոլորդ էլ բարի սիրտ ունիք, բայց ինքներդ դեռ խելահաս չէք: Վնաս չունի, յետոյ. եղէք միշտ այդպէս մի ծածկէք մեծերի: Դի գործերը: Թող մեծերը ձեզ օգնեն, թող սովորեցնեն ձեզ, և այն ժամանակ այսօրուայ սխալ մունքի պէս սխալներ այլեւ չեն լինի:

ՎԱՐԱԳՈՅՐ



ՀՀ Ազգային գրադարան



NL0312865

Շարունակում է 1910 թ. բաժանորդագրությունը

XXVIII
ՏԼԻՒ

ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱՉ

XXI
ՏԼԻՒ

Պատկերազարդ համդրանքի

Տարեկան բաժանորդները ստանում են

1) ԱՂԲԻՒՐ, 2) ՏԱՐԱՉ, 3) ԱՂԲԻՒՐ ԱՅՈՒՆԷՔ, 4) Ա. ՌՈՂԱՅԱՆ, 5) ԳԵՂԱՔԵՂԻԿ, 6) ՎԵՀԱՔԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍ Սահակ Բանբեկ զարադ ճշգրիտ կամարների ասի, 7) Ա. ՍԱՀԱԿ, 8) Ա. Մեղրու, 9) Վարդան գորակարի և Գրոշակ, 10) ՄԻԲԱՅԻՆ ՆԱԻԲԱՆԴԱՆ, 11) Հայոց Հայրապետի աշակերտներ, 12) Ա. Խոսեան Տանգի գեղանկարչը 19-րդ դարում, 13) ԳԵՂԱՆԻ ՕՐԱՅՈՅՑ 1911 թ., 14) ՄԱՆԿԱՆՈՅՈՒՄ, պիես, 15) ՉԱՐԱՃՈՒ ՍԻՄՈՆԻԿԻ ճանապարհորդություններն ու արկածները, 16) Հայրենիք արդարև, անգագրական, 17) Աղբիւր 30-ին Աղբիւրի և Տարազի 1910 թ. 5000 ՊԱ-եր բաժանորդների վճ. փնակ գումար 500 առարկաների 2 տուն:

Այս թուրք ստանալու համար տարեկան բաժանորդները (Իսրայելներ, Գրադաբաններ, Հաստատություններ, հասակներ բաժանորդներ) վճարում են 10 ռ., արտասահման 18 ռ., կամ 50 ֆր., բոլ գաղտնական աշակերտի հասցեով 5 ռ.:

Ապագայի և հաստատ գաղտնի բաժանորդագրություն և քննարկում: ՀԱՍՏԻ փոխելու համար պետք է ուղարկել նորի հետ և հին հասցեն ու 35 կ. էլ մարկա, հակառակ դեպքում հասցեն չի փոխում:

Հայոց՝ ТИФЛИС, Редакция АГВЮР կամ ТАРАЗ.

TIFLIS. Direction AGBUR կամ TARAZ.

4 Ո 2

Աղբիւր և Տարազը անհրաժեշտ պարբերական հանդէսներ են, և կարեւոր է հայտնիան բոլոր խաւերում արանց տարածելը գիտակցաբար ստանալ:

Աղբիւր չբնական մեղ ուղարկելու գրություններ, այս ու այն կերպ արտասրտաբար զգուշանալ, զո վնասներ խրատողներ կարգալու: Մենք բոլ ընդունում ենք մեր ստանալու գործի փնակներն ու ազատաբար փնակներ հայտնիան համար:

Մեղ տնտեսական է, որ անհամեմատ աւելի քննարծակ տարածեն Աղբիւրն ու Տարազը:

Հայոց գաղտնիներ, շատ քիչ բացատրանալ, չեն ստանում Աղբիւր և Տարազ: Հայոց ուսումնարանների աշակերտները գտնում են նոյնիսկ տարեկան ՄԵՆ և ՎԵՐԵՔ և բաժանորդագրել Աղբիւրին, մինչդեռ բաժանորդներ, գեղանկարի, միջնորդական գաղտնիներ և արանց աշակերտները շատ քիչով թեով բաժանորդ են առնում Աղբիւրին:

Միջնորդական գաղտնիները և արանց աշակերտները շատ քիչով թեով բաժանորդ են առնում Աղբիւրին:

Ի՞նչով բացատրել այս փնակը: Հրապարակի վրայ գեղեղ այս Տարազ և Տարազով արտասրտաբար, այսու հրապարակում ենք հայ գաղտնական վարչախիւսներն մտցնել իրանց տարեկան թիվէի մէջ Աղբիւր-Տարազի բաժանորդագրին 10 ռ. և տարադրել Աղբիւր-Տարազ հանդէսներին:

Հրապարակում ենք հայ ուսուցիչներին և ուսուցչուհիներին տարածել Աղբիւր և Տարազ իրանց աշակերտների բնասանքներում:

Բոլ մեր գաղտնական բաժանորդ աշակերտներին էլ հրապարակում ենք իրանց բնակներին յարգող կարգալ, որ նրանք էլ Աղբիւրին, Տարազին բաժանորդ գրեն: